

Պւռհայեցու «Գրուց աշխարհ» կոչւում է Վանանդու թագա-
ռորութիւնը: Մեր ձեռքի տակ ունինք սոյն յիշատակարանի մի
այլ օրինակը, որի վերնագիրը տարբեր է և հէնց սկզբում ու-
նի մի մեծ հատուած աւելի բան: Մեզ ցանկալի էր, որ մի
երկորդ տպագրութեան ժամանակ թէ այս և թէ Կոստանեան-
ցի իւր ձեռագրի (էջ 45) բաց թողած հատուածը տպագրուէին:
Մանօթ պատմագիրներից քաղած հատուածը ինչպէս այս դէպ-
քում Սեբէսինը ոչ միայն անպատճառ պատմական, այլ և լե-
զուաբանական և կամ այլ պատճառներով և իբրև ամբողջու-
թիւն կարեւոր էր:

Որպէս զի ամբողջացրած լինինք Կոստանեանցի երկասի-
րութեանց ցանկը, չմուտանանք յիշել նորա աշքի ընկնող բա-
նաօիրական մի երկը «Համամ Արևելցին»:

Մեր ժամանակը, մանաւանդ թէ մեր ընթերցող դասա-
կարգը, լրագրութիւնից և վէպերից դէն չէ անցնում: Ամեն
բան ժողովրդականացնելու յախուռն ցանկութիւնը չէ գնահա-
տում այս տեսակ գիտական ուսումնասիրութիւնները և ըմ-
բռնում չէ այս տեսակ մենագրութեանց նշանակութիւնը:
Ծարդիկ մոռանում են, որ մինչև զլնին Կոստանեանցի նման
շատ անխոնջ մենագիր մշակներ, հեղինակներ, անհնարին կը
լինի պատրաստել զիտութեան պահանջներին համապատասխան
գրականութիւն և ազգային պատմութիւն, որոնց մասին
լսում է և խօսուում և կարծես թէ մեծ պահանջ է զգաց-
ւում: Մեզնում թեսակիսում են այս ասպարէզը մարդիկ, որոնց
համար նոյն իսկ պարզ չէ ազգային գրականութեան և պատ-
մութեան սահմանը:

Սակայն և այնպէս միսիթարական է, որ Կոստանեանցը
մենակ չէ այդ ասպարէզում և նորա նման ուրիշ խորհողներ
և աշխատողներ էլ կան. իսկ Կ. Կոստանեանցին ի բոլոր սրտէ
ցանկանում ենք յարատեսութիւն և յաջողութիւն:

ՍԿԱՅ

Современные армянские поэты. М. 1903 г. ц. 1 р.

Ուղիղ տասը տարի սրանից առաջ լոյս տեսաւ պ. պ.
Ֆէրիչ Վեսելովսկու և Մինաս Բերբերեանի խմբագրած և հրա-
տարակած «Արմանքի Բելլետրիստք» գրքի առաջին հատորը:
Դա առաջին սիստեմատիկ փորձն էր ծանօթացնել ուսւա ըն-

թերցող հաստակութիւնը հայերի հետ — գրականութեան միջոցով։ Հրատարակութիւնը, չնայած իր թոյլ կողմերին, մեծ յաջողութիւն ունեցաւ և մի տարուայ մէջ սպառուեց, թէպէտ և այդ հրատարակութիւնը ձեռք բերովներից շատերը ոսախօս հայեր էին։ Հրատարակիչները արդէն պատրաստել էին և տըսպել երկրորդ հատորը, որը սակայն լոյս չտեսաւ յայտնի պատճառով։ Այդ հատորի համար պատրաստուած հատուածները և թարգմանութիւնները յաջորդաբար լոյս տեսանգանագան ուսւ պարբերական հրատարակութիւնների և ժողովածուների մէջ, բացի դրանից նոյն հրատարակիչները, մանաւանդ պ. Վեսելովսկին, շարունակ տպում էին այս կամ այն ուսւ թերթի կամ ամսադրի մէջ յօդուածներ հայոց արդի գրականութեան մասին և թարգմանական կտորներ։ Պ. Վեսելովսկին բացի դրանից հրատարակեց իր բանաստեղծական թարգմանութիւնների և բննագատական յօդուածների ժողովածուները, որոնց մէջ մեծ տեղ է բնուում հայոց գրականութիւնը։ Այս պարոնների գործունէութեան հետ զուգընթացաբար գնուում էր և Կովկասի մի քանի ուսւ թերթերի գործունէութիւնը նոյն ուղղութեամբ, այնպէս որ վերջին տասը տարուայ ընթացքում հաստատապէս կարելի է ասել, որ բարականին բան է արուած ուսներին հայոց արդի գրականութեան հետ ծանօթացնելու գործում։

Այժմ նոյն նպատակն են դրել իրանց մի խումք Մոսկուայի հայ երիտասարդներ, որոնք հրատարակել են՝ «Современник» արմանական պօթեա» վերնագիրը կրող ժողովածուն՝ Լ. Ռւմանեցի և Առաքէլ Դերվիշի խմբագրութեամբ։ Ժողովածուն տալիս է Յ. Յովհաննիսիսանի, Ա. Յ. Թումանեանցի, Նատուրեանի. Լ. Սահնուէկեանի և Ա. Խաչակրեանի բանաստեղծութիւններից թարգմանական նմուշներ։ Թարգմանութիւնները արել են՝ Ռւմանէց, Քալմոնտ, Գոլովաչևսկի, Ա. Կորինֆոսկի, Գալինա և այլն։ Զեկարելի չզարմանալ, որ խմբագիր հրատարակիչները անտես են արել պ. Խւրի Վեսելովսկուն, որը այդ թարգմանիչներից վատ չթարգմանելով հանդերձ, ունի այն առաւելութիւնը, որ գիտէ, հասկանում է հայերէնը և իսկապէս թարգմանուած է, մինչդեռ միւսները՝ ոտանաւորի են վերածում ուրիների թարգմանածը։ Այսպէս օրինակ Քալմոնտը, Ռւմանէցը՝ և այլք ուսանաւորի են վերածել այն բանաստեղծութիւնները, որոնք իր ժամանակին նրանց բառացի թարգմանել են հայերէնից։ ուսւ-

ոերէն պ. Մինաս Բերբերեանը և Խւրիյ Վեսելովսկին, որոնց
անունները սակայն չեն էլ յիշում ժողովածուի մէջ։ Դա ար-
դէն ցոյց է տալիս, որ գործի գլուխ են անցած մարդիկ, ո-
րոնք այնքան էլ լուրջ չեն նայում իրանց պատասխանատւու-
թեան վերայ. Մէկ անգամ, որ թարգմանութիւնները իսկական
թարգմանութիւններ չեն - իհարկէ հարկ էլ չկայ խօսել, թէ
որ աստիճանի նրանք յաջող են, մօտ են ընագրին, տալիս են
հեղինակի ողին և այլն. Բաւական է ասել որ նրանք ընդհա-
նուր առմամբ յաջող են և կարողանում են գաղափար տալ
մեր երիտասարդ հայ քնարի մասին։ Զգիտինք միայն, թէ ին-
չու ընտրեալների մէջ ընկել է և պ. Լևոն Մանուէլեանը, քանի
որ նրա բանաստեղծ լինելը նոյնքան կասկածի տակ է, ինչ-
պէս և Սրբինդինը, Բալողեանինը և այլն. և յամենայն
դէպս սրանք իրուն Dii Minorit կանգնած են մէկ և հա-
ւասար աստիճանի վերայ, և հարկ չկայ և. Մանուէլեա-
նին զերադասութիւն տալու։ Բացի ոտանաւորներից, ժո-
ղովածուի մէջ զետեղուած են փոքրիկ, կարճառօտ կեն-
սագրական - գրախօսական յօդուածներ, ամեն մէկ բանա-
տեղծի մասին առանձին առանձին։ Այդ յօդուածները կարելի
էր կազմել աւելի լուրջ և աւելի մեծ խնամքով։ - Զնայած
այս բոլոր պակասութիւնների, մենք սիրով ողջոնում ենք այս
հրատարակութիւնը և ի սրտէ ցանկանում ենք նրան յաջողու-
թիւն ռուս հասարակութեան մէջ։

ՕՐ. ՅԻՄՐ

L'hirondelle - Ծիծեռնակ. Ֆրանս. թարգմ. Ն. Լալալ-
եան. ձայնագրեց Ն. Նիկոլայև։

Դոդուխեանի հանրածանօթ «Ծիծեռնակը», որ այնքան սի-
րելի է հայ ժողովրդին, Քրանսերէնի է թարգմանել և եղանա-
կել պ. Նիկ. Լալայեանը և ձայնագրել է երաժշտապետ Ն. Նի-
կոլայեր։ Այդ աշխատութիւնը պէտք է լոյս տեսնէր վլու-
մայիր անցեալ տարուայ համարներից մէկում. բայց Թիֆլի-
սում անկարելի եղաւ երոպական ձայնանիշները օրինաւոր
կերպով տպել։ Այժմ ոլ Լալայեանը նոյնը առանձին ըրոշիւրով
հրատարակել է Մուլուայում։ «Ծիծեռնակը» ձայնագրած է բա-
ւական անոյշ եղանակով, ճիշտ այնպէս, ինչպէս երգւում էր
70-ական թուականներին։ Պ. Լալայեանցը հին և հմուտ գրա-